

ԽՄԵԼԻՄ

ԵՐԿՐԱՆԵՐԻ
ՆՈՅՆՈՐՈՒՅՅ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1911, Շաբաթ, Յունւարի 22-ին. Թիֆլիս. № 5.
Պ Ե Ր Ս Կ Ե Ս Տ Ե Ն Ի Ե Ն Կ Ե Խ Ո Ի Թ Ի Ի Ն Ը



(Քաղաքագլխաական խաղ կամ ձև...)

Բ Ա Յ Ի Ա Մ Ե Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն

1911 թ.

VI Տարի

ՄԱՐԿԱԿ

VI Տարի

Երզնիստիական-աստիճանական պատկերագրող շարաթմաթերթի

ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄԵՆ ՇԱԲԱԹ ԱՆՆԱՓԱՆ

Պաշտօնական օրգան պետական, ազգային, հասարակական և օտարազգի բոլոր մեծ և փոքր, յայտնի և անյայտ, պիտանի և անպիտան, փրկիչ և զլփիչ, անկեղծ և կեղծա-
ւոր գործիչ-կորզիչներին և խայտառակիչներին:

Անհրաժեշտ թերթ բոլոր բնակիչների համար

«ԽԱՌԱԲԱՂԱ» շաբաթը ծիծաղեցնում է, շատերին էլ ցուցնում, բայց ոչ ոքի հետ ոչ բարեկամ է և ոչ թշնամի: Խմբագրին կարելի է տեսնել, երբ քեֆերդ ուզի:
Հանգեն՝ Тифлисть Музейный пер., Редакция „ХАТАБАЛА“

Արտասահմանից՝ Tiflis Caucas Redaction «Khatabala»

Խմբագիր-հրատարակող՝ Ա.Ս.Տ. ԵՐԻՑԵԱՆ



«ԽԱՌԱԲԱՂԱ»

Բ Ա Յ Ի Ա Մ Ե Բ Ա Ժ Ա Ն Ե Գ Գ Ր Ո Ւ Ն Ե Գ Գ Ո	Յ Ո Յ Գ Գ Ր Ո Ւ Ն Ե Գ Գ Ո
Տարեկան	3 ռ.
Կէս տարին	3 »
Երեք ամիսը	1 » 50 կ.
Ամիսը	— 50 »
Թիֆլիսում տարեկան	4 » — »

«ԽԱՌԱԲԱՂԱ»-ի բաժանորդները կարող են ստանալ «ՍՈՒՐՉԱՆԴԱԿ» օրաթերթը պակաս վճարով, երկուսին միասին փոխանակ՝

Տարեկան	12 ռ.
Կէս տարին	6 ռ.
Երեք ամիսը	3 ռ. 50 կ.
Մէկ ամիսը	1 ռ. 20 կ.

100 տարով բաժանորդագրել
ցանկացողին 75% զեղջ
Ձրի կարգացողներին պէտք է նկարենք
գ լ խ ի վ ա յ Ր :



ՊՐԵՁՁԱՆԻ ԱՌԱՋՆՈՒՐԹՈՂ

Վուր գիղենաք, թէ հիմի ուր իմ, կու արմնաք. վա, վիրջը իս էլ հառ-
թին արի, Բաքու էկա. — հայերու հա-
յասուունը. արքայութիւնը:

Իմացիլ էք խօ, վուր ասում ին, խանդիսխան էլ գրում էին, թէ Ման-
թաշուլի նաւթի օրմօէքը, (հորերը) մի
ինչ վուր նեմենց թէ շէգ՝ նորբին է,
կօսէ, անում:

էս բանը խիստ փիքը անիլ աւից
ինձ. ինչք, ասի, ինչի պաի մի հայ
փիրմա ծախի ու անուդն էլ ետա ազգ
ըլի, ասի. ճիճինի էի գայի, խանդիս-
խան հեմաի էի հերստուում, վուր կը-
նոջս ու էրեխեքանցս հիգն էլ չէի խօ-
սում. վա, ասում էի, նորբը գայ՝ միր
հուղումը, միր պէտաւած Կաւկազումը
հուղիր ու հանքիր առնէ ու մինք, հա-
յիրս կի ախմախարարի հեուից մտիկ
ամնք, ասի:

Հուղումը մէ էրկու շահի հորուցի
փուղ իս էլ յիգ գցած ունէի, օշովին
մաւայ չէի դնում, ումը ապիւս էի,
ախպէր, էլ յիգ ասանալը չէր ըլում.
լաւ-լաւ ննգիր տղերք ունիմ, լաւ-լաւ
բարեկիմիք, ժոնով ուաիմ դրանց զի-
փունքի գլխիքը, ումը ինչ աւի, աւի,
հիմի հիգաէլ չին խօսում ու վուր թէ փուղս
յիգ ալ էսու վրէն չին փիքը անում:

Բանկերումն էլ մաւայ չգնացի, վուր
թէ աւի բէպիւս ցիօրա-ցօցիալօբա ննգնի
ասի, ան բանկիր կոտրին, ասի, ան
կուար ննգնի, ասի, զիմի շարեցի,
վիրջը վիկալայ ու տանը, միր հին թոն-
րապանն էի պահում, պատի ճեղքի մէջ,
խան էլ տանում էի կրիշումը հին գուլ-
բէքի մէջ կապած բուխրու կուղբին
քաշ էի ապի. հիմի էլ փիքը արի, ախ-

պէր, ասի, ինչի իմ էս անգէր փուղը
էսէնց պահում, վի կենամ, ասի, գնամ
Բաքու, ասի, ու իմ բախտն էլ մէ ջէր
իս փորցիմ, ասի:

Քու արիւր, էս բանը վուր կնգաս
ասի, նրա խիլքումն էլ նստից:

— Լաւ կուլի, կօսէ, մաշ ինչ, մարգ
փուղ ունենայ, կօսէ, ու մէ գուրծքի
վրէն չբանեցնի, կօսէ, էգբա մինք էլ
միլիոնչիկ ըլինք, կօսէ:

— Դուրթ իս ասում, Մարօ ջան, ա-
սի. մինք ումից ինք պակաս, ասի,
թէ շատը խիլքի բան է, իս խիլքը ու-
րիշներուն էլ մաժնում իմ, ասի, թէ
իղբի (բախտի) բան է, ու իմ թաւուր
իղբաւուր (բախտաւոր) մարթ ինգլիգ-
ներու թաքաւուրն էլ չի ըլի, ասի. էս
բանը խաբար արի իմ բարեկիմներուն
էլ, լաւ-լաւ ճանանչներուն էլ, հախ
Ասծու, զիփուր էլ ուրախացան. — ա-
բա միլիոնչիկ վուր դանաս, միգ չը
մոռանաս, կօսէ, — ասում էին ինձ, իփ
վուր վագգալում՝ ճամփու էին դնում:

— Թէ վուր ձիգ մոռանամ, մաշ վուր
արժանանամ քաղաքը տեսնելու ու շի-
րաչխանու անցողներու միխը վզիս
ըլի, ասի:

Կիրագի օր էր, լաւ էլ ցուրտ էր.
էս Առտուձն էլ, օրնուի իր կամբը,
խասիաթը փոխիլ է, էն մէկէլ տա-
րին էս ժուղը ինչլաւ օրիք էր անում,
շուք էլ էր, ճիճի կի հեմաի ցրտիր է
մօգոնի, վուր կօսիս, դրամէն սաւայի
էլ բան չէր պակսում միգ:

Հա, էն էի ասում. կիրագի օր էր,
գնացի թոնդրատանն էլ, կրիշա էլ զի-
վիր բացրացայ ու ինչ վուր փուղ ու-
նէի, մօգ արի, զիվիր բերի առն,
համբերցի ու հեսարով տեհայ, վուր
լաւ կամ ինձ համա:

Իրիք թուման թուխ փուղ էր, օխ-
տը թուման դիփ էրծթի Նիկալաւակի
մանէթնիր, ուրիշը չգիղենաք, էրկու
թուման ուղալթուննիր ու էրկու թու-
ման ու վից մանէթ ու տասչուրս
շահի էլ սիւ փուղ:

Դիփ անում էր տասչուրս թու-
ման, վից մանէթ ու տասչուրս
շահի:

Վից մանէթն ու տասչուրս շա-
հին կնգաս աւի, համ խարջի, ասի,
տան պակասութիւնը տիս, ասի, համ
էլ գայրաթով ժաժ արի, ասի, մէ քիչ
պարտքեր ունէի, էն պարտքերս էլ
տու, ասի, էրէխեքանց համա էլ լափ-
չիքնիր ու գուլբէքնիր առ, ասի, բը-
ջին էլ ջամագիր տու, ասի, թուլուխ-
չուն էլ ջրի փուղ սիվցրու, ասի, նաւթ
բերողին էլ տու իր հասնելիքը ու ի-
րան էլ ասա, ասի, վուր խիլքի գա,
էստու էգնէն էնդգամ նաւթ բերիմ
Բաքուէմէն, ասի, վուր անով տիղով
էրիմ, էլի հերիք անի, ասի, վիրջն էլ
խնդրեցի թէ կանան մէ բան յիգ գը-
ցէ, ասի. էս փուղիքը սիւ օրւայ հա-
մա պահէ, ասի ու ճամփու ննգայ:

էս փիքներումն էի, վուր վագոնը
մտայ, փուղն էլ մէջքիս վրայ ախա-
լուխի մէջքը կարել աւի, ով զիղա
զիղենալ ասի, թէ էս սհաթիս ինչիր
իմ փիքը անում ասի:

Իս էս սհաթիս ով իմ, վուր չիչ. մէ
Գասպար Կալատուղով, վուր մեռնիմ
շատ-շատ ասին, — Աստուձ հորին լու-
սաւուրէ: Համա, թէ վուր, վիրջը մէ
բան ըլաւ ու Բազլի նաւթի օրմօէքու-
մը (հորարը) միլիոնչի դառայ, ինչ
կուղին, ասի, էն շախը վին գողգիծու...
էն շախը էս հայ գրողները, բէգախ-

տուրնիրը, բանկիրնիրը վուտնիրս կու լիզին, ասի.

—Պարուն Կալատուզով, խնթրում ինք միր տուտուց տղին ստիպենդիա շոխքիս, գուզէ արլակատ դաննայ:

—Պարուն Գասպար, մէ ցանցար վուրթի ունիմ, մարթ չի դաննում ստուղէնդութէնի համա հոքի է տալի, ի սէր Ասծու, մէ բան տու, թող դօխտուր դաննայ:

—Պարուն Գասպար աղա Կալատուզովեանց, գէթաղայ, մէ խնդիրը ունիմ, մէ աղջիկ ունիմ, տեսքով է, ուզում է դնա Պետրէբուլս — կուրսիս կութին սովրի, գէթաղայ, քու վուրթկերանց սագաղին, մէ բան տու ամսական, թողէնդի ապրի, մինչկի մէ իրա հանգի արմարս ուս ստուղէնարի ոստ կուզայ. էգէբա կու պսակի: Դիք գուքան էսէնց ու խնդիրքներով արգա կօնին ինձ:

Էլ խումբագիրնիրը, էլ վարժապետնիրը, էլ տէրտէրնիրը, էլ իրիցփուխնիրը, մաշ հոքարարցունիրը, մաշ ուրիշնիրը...

Իս էլ կուտամ, կուտամ դիփուսանց, ինչ իմ կորցնում:

Լաւ կուլի, իս ու իմ Աստուծը:

Հա, էգ փիթրերունն էի, վուրդանց վուրդի «Սաթարալի» կանտորչիկ Արմէնական էլ վուզ վուզ վագելով, լեղապատառ դուս նընգաւ պլատֆորմի վրէն:

—Պ. Գասպար, վուր Բագու իս գրնում ու էնդի Մանթաշովի հանգի միլիոնչիկ դաննաս, կօսէ, ինձ դիրեխտուրութի կուտանս, կօսէ:

—Չէ ասի, չիմ կանայ էգ բանը անի, ասի:

—Ինչո՞ւ, կօսէ:

—Միզէգներով, ասի, Չէր էնդուր վուր Մանթաշովի օրմօէքը, սկլագնիրը պարախոզնիրը, մաշինէքը, նաւթի շատուաննիրը վուր անիմ, ասի, խօ չիմ կանայ, ասի, նրա դուլուզչիներուն էլ ճամփու դնիմ, ասի, նրանք էլի իմ մօղ պտին ըլի ասի, վրա էրկուսն էլ էն վուր՝ դիրեխտուրը ֆրանգ պտի ըլի ասի. այ Մանթաշովի մօտն էլ վունց վուր Սարուխան Առաքիլը. նրան հացից չիմ կանայ կարի, ասի, իս էսէնց խապիթ ունիմ, ասի:

Չանգակը տւին. դիփուսքի հիդ պրօշտի արի. դիվիր բանձրացայ վագոնը. քու արևը, խօջի բաղնիս էր, էլ ինչ վուր Չուզնիր կէին՝ էնդի էին. ժամ էին ասում:

—Ինչ իք էստի ժամ ասում, ասի:

—Էրուսաղէմ ինք գնում, կօսէ:

—Վա, էրուսաղէմի ճամփէն գանա էս կնուն է ասի:

—Էրուսաղէմը, մեսաէն Բագուումն է, կօսէ, ու էլի շարունակեցին, էլի գանգը տւին ու դոճմփ, դոճմփ, դոճմփ.

մաշինէն սկսեց տեղիցը շարժւիլ: Համ բարեկամներու նայեցի փանջարեմէն, համ էլ ձիուովս մէջքիս վրէն կարած փուղը սնդղեցի:

Մնաք բարով:

(Էլի կուլի)

Գասպար Կալատուզով
Խարաբալա ամենայն հաուց



ԺՈՂՈՎՐԻՆՆԵՆ ՄՕՏԻՆՆԵՐԻՑ

I

Սարի լանջին մենակ բացւած ծաղիկ ես, Մախշուն գարնան շաղով ցօղւած նունուֆար Անուշ հոտով մի շարմաղան քնքուշ եար:

Դու փնջելու ծաղիկ ես,
Ալան, ալան ծաղիկ ես,
Հայի մարալ աղջիկ ես.
Դէ՛ն, մի՛ անիր կեանքս կէս:

Կանաչ դաշտում ճերմակ, ճերմակ շուշան ես,

Վարդի թփին հէնց նոր փուած կարծիր վարդ—

Չանկների էրած, խորւած սրտի գարդ:

Դու փնջելու ծաղիկ ես,
Դու երկնքի աստղիկ ես,
Հայի շէյրան աղջիկ ես.
Դե՛ն, մի՛ անիր կեանքս կէս...

Հայի բանդւած սուրը օջախի դու սիւնն ես,
Նրա մթնած երկնքումս վառող լոյս,

Տանջւած իոզուս, մաշւած սրտի վերջին յոյս:

Դու փնջելու ծաղիկ ես,
Ծաղիկ ես, ծաղիկ ես
Հայի հէյրան աղջիկ ես.
Դէ՛ն, մի՛ անիր կեանքս կէս...

Արգար Պալազուս

ԲԵՌԵՍԵՂ ԿՄ ԲԵՐՐԱՎՈՒՄԸ

Երկու պօլսեցի գալով Թիֆլիս, մտան մի հիւրանոց և հիւրանոցի տիրոջից № խընդրեցին:

—Մեզի համար (№) տէք, ասացին:

—Ի՞նչ տանք ձեզ համար (ԱՊԱ), չհասկանալով հարցրեց հիւարոցի տէրը:

—Համար, կրկնեցին նրանք:

—Ո՞ւմ համար և ինչ, ասաց շարած հիւրանոցի տէրը:

—Ախպար, մեզի համար և համար, պատասխանեց նրանցից մէկը քիչ բարկացած:

—Ախպէր, արևս վկայ բան չիմ հասկանում:

—Չանըմ, նոմեր ըսէ, որ հասկնայ դար-

ձաւ նրանցից մէկը՝ միւս ընկերին, պօլսեցուն:

—Է՛, —ըշտէ նոմեր, հը, նոմեր մը տուր:

—Էտէնց ասա էլի, տօ հէր օխհասծ, համար հն համարը պցել ես ու կանգնել, ասաց հիւրանոցի տէրը, հիմա հասկացա, համեցէք:

—Ինձի նայէ, վերի յարկը թանգ կուտաք, հարցրեց պօլսեցին:

—Հա, աղա, հարկը շատ ենք տալի, և իսկի խէր չենք անում:

—Ան յարկի սենեակները կօսի:

—Հրամեր ես, աղա, սենեակների հարկը, նալուզը շատ ենք տալիս:

—Ախպար, աս ինչ ապուշն է եղեր, դարձաւ պօլսեցին ընկերոջը:

—Չանըմ, էտած ըսէ, որ հասկնայ:

—Է՛... Թող էտած ըլլայ, վերի էտածի սենեակները աժմն են, հարցրեց պօլսեցին:

—Հա, աղա, էժամ են:

—Է՛... Ինչո՞ւ:

—Նրա համար, որ հրդեհի երկրաշարժի կամ մի որևէ աղէտի ժամանակ վերի էտածից փախչելը դժար է: Այ օրինակի համար կրիշէն մինչև անգամ ձրի է և դրա դամար էլ կատուներն են ապրում այնտեղ, չվախենալով ոչ մի բանից, բանի որ նըբանց համար շատ հեշտ է մի կրիշից միւսը թռչելը, վրայ տեց հիւանոցի տէրը, կէս գրական և կէս գաւառաբարբառով:

—Է՛. աղէկ, աղէկ, գուլանիս մի ցուցներ, մեր նոմերը ցուցուր:

—Քանի՞ ժամն է, Թիֆլիսի հաշուով, հարցրեց հիւրը՝ տեղաւորելուց յետոյ:

—Ուղիղ չգիտեմ, պարսն, կարծեմ երեսուն ժամ կայ Թիֆլիսում, կարող է և աւել լինել, պատասխանեց հիւրանոցի տէրը:

—Ո՞ր ժամն է, կսիմ, մնող Աստուծոյ:

—Էս երևացողը, դա Քամայեց ժամն է, որ էսքան ժամանակ չկարողայան շինել, վերջացնել, հայ ենք է... հայ, այ հոգաբարձին ու երեցփոխին Աստուծ հոգի է տւել՝ չի կարում տունի, է՛ն, մախլաս, վարժապետներն էլ մի բան չեն, նրանք էլ են ուզում որ շուտ չշինելի:

—Ախպար, աս ինչ խէնթի մը պատահեցանք:

—Չանմ սնաթ ըսէ, սնաթ, դարձաւ նըբան ընկերը:

—Սնաթ, է, հայերէն եղաւ: Եկեղեցուն ժամ կսին, ժամին՝ սնաթ ու մեզի ալ կըծաղքին աս ուղտահայերը: Է՛, աղէկ, սնաթի քանիքն է:

—Ի՛է ես ինչ անեմ, հէր օխնած, սնաթն ես ուզում իմանալ ու ժամ, ժամ ես անում. Սնաթի օխն է, պարոնս:

—Օխտը քրքան է:

—Եղբի, սեմ, շիդի, հը փիէ, սրանք հայ չեն, ասաց ինքնիրան հիւանոցատէրը՝ բարկացած:

Վերջապէս մեր պօլսեցիք շարունակ լեզուակուր մղելով հիւրանոցատիրոջ հետ, մի քանի ժամանակ մնալուց յետոյ՝ մեկնեցին:



—Այս ինչ լաւ է. ես շատ եմ հաւանում, ափսոս, մէ զուոնս եւ կամ դուդուկ էլ լինէր աւելի լաւ կըլինէր:
—Աբա եթէ Աբթուլ-Բադին էլ կրգէր՝ ինչ քաղցր կըլինէր է՛:
—Մի քիչ շուտ-շուտ է ածում, թէ չէ՛ սա էլ ոչինչ—լաւ կըլինէր...

Մեկնելու ժամանակ նրանք հարցրին:

—Ո՞ր ժամին...ը... քանի սնաթին կը-
ճանապարհւի գնացքը գէպի Բաթում:

—11-ի կէսին (10¹/₂):

11 և կէս, է, աղէկ, ասացին նրանք
կարծելով, թէ նա 11 և կէս ասաց:

Ուղիղ 11-ին նրանք կայարանումն էին,
կարծելով, թէ կէս ժամ ժամանակ ունեն,
բայց գնացքը կէս ժամից ասալ էր դուրս
եկել:

Յով. Մար.



ՅՈՅՁԵՐ ՏԵՆՁԵՐ

Երնէ՛կ լինի իմ չոր կրծքին
Երկնաժպետ արշալո՛յս,
Եւ պարուրէ իմ խնկած նոզին
Բիր նամբոյրով ապ ինձ յ ո՛յս...

Նորաբողբոջ բուսր ցոյրով
Հիսեմ ուղին իմ ա՛ն յ ա յ տ—
Քաղցր նմայքին ողորն տալով
Գզեմ մեղմ ո՛ւր... պագնեմ ա՛յտ...

Իմ ցաւագա՛ր, խելս ո՛ւ նոզն
Երնէ՛կ լինի սողճամուղ,
Որ նա ազատ լողայ անուն
Կապոյտ մթում անմոռնէ:

Իմ վառ սիրոյ յոյգ-տնէշերին—
—Ճաղկափթի՛թ, յուսացո՛ղ—
Երկրպագէ երնէ՛կ արփին,
Եւ գրկէ՛ ինձ լոյսի շո՛ղ...

Նարգիզ

ՆԱՄԱԿ ՂԱՐՍԻՑ

Հասցէ բարեազիրս ի քաղաքն Ղարս—Խօ-
ւերս քոյրիկիս.

Ազի՛զ քոյրիկ, Պօլերիկ ջան՛Ա

Գլխանց բսիմ, քանի մտէս չէ յիւր: Աս
բարովագիրս կարգաս կը, թէ չէ, ան սնա-
թին պատուէ, կրակ ցէ, չլի թէ, ասոր
անոր ձեռը յընկնի, մեր սըռը յիմանան,
զէյնները բացւի, գենա հազըրին ու մեզի
հետ կուր բաշլային: Յանկջիդ բուրթը հա-
նէ, ինչ որ կսիմ, լաւ յականջ էրէ: Հիմի
լաւ վախթն է, ես ու դուն հիմիկանից
պիտի հազըրինք, պիտի թատարուկ տես-
նինք, որ տաքութիւնը յընկաւ թէ չէ, դուր-
մի հախիցը գանք: Դուն քու բացիկներով
ատ թարաֆէն բաշլայէ, ես իմ մկներով աս
թարաֆէն բաշլայիմ կը: Քանի խալխալանը
արխէին ին, քանի շէնիկը քնած է, քանի
պօլիցան, գուլուղտար չիռոյնիկները ար-
խէին կարթ խաղան կը, հէչ քանի չին
խառնի, քանի աղաները հէչ թատարուկ
չեն տեսի, գազէթները կարգան ու յանկջի


յետև ցկին կը, ես ու դուն հազըրինք, մեր
գործը գողտուկ տեսնինք ու բինգանբիրայ
ըկերուն չոքինք: Հիմի ձմեռ է, մեր թաւ-
բալ շէնիկը ցուրտը մահանայ կենին ու
հազար չեշլտ յաղը ու զիբիլ, զահր ու զը-
խում, հոտած ու մըլած աշին օշին բաներ
քթոցներով, թիերով, քուղաներով, գար-
շոկներով տներից հանին կը, հմը գոան
յառաջ քթերուն տակը թափին կը ու ձնով
ձածկին կը, ինչը որ կատուները կենին:
Անոնք չին հասկնայ, հմը ես ու դուն շատ
լաւ հասկնանք կը, որ քանիմ շարաթ յեղև
օրերը տաքնան կը, ձները հալին կը, արթը
ձան տակը հոտած ուսնկ-ուսնկ զիբիները
բացւին կը, կակղնան կը, ծուղամիշ կըլին
կը, արթը ատոնց միջից զլլալէն վագին
կը գեղին ջրեր, լյւին կը ուլիցները ու
տեղոտեղ խօլերի բացիկներ գոանան կը
ու գենայ իրենց ջանը մտնին կը: Ծտա
ատ վախթը դուն մանգաղը սրէ, ես գե-
րընդիս: Տէյմօր խալխալանը թափրամիշ
յըլի, տէյմօր ժողովներ էնին, տէյմօր ճա-
ռերը կարգան, մատաղներդ մորթին, տէյ-
մօր հոգաբարձու ջոկին, հէքիմ ու Ֆերշիլ
գտնին, տէյմօր զոշրիթալ սարքին, մենք
ալ էփէյի քաղինք կը, մեր բեռը բունինք
կը: Հասկցնք քոյրիկ ջան: Հն, բան մալ
բսիմ: Ծտա գանգիներուն չմօտենաս, վեր-
քան կունաս աղքատներուն մահէքը, աղքատ-
ներում մէչը ժուռ արի: Քաղքի վենձ-վենձ
աղաներից հետև կեցիր, որ չլի թէ գան-
գինները գարթնին ու փարայ խարջին,
պատրաստութեն տեսնին ու մեզի հետ կը-
ռիւ բաշլային: Չունքի գանգիներուն խա-
սիաթը ես շատ լաւ գիտիմ, տէյմօր իրան-
ցից քանիմ հատ չերթայ, փարայ չին խար-
ջի, գործի չին խառնի: Խոտտովանանք մալ
քեզի ըսիմ: Ես թատարուկ տեսնիմ կը որ
էջմիածին պիտի ուխտ էրթամ, վանքի
չորս բոլորը, խցերը, պարսպի մէջը, սինօ-
թը ճեմարանը յուզածիս պէս պիտի յստ-
կիմ, որ թագա կաթուղիկոսը էկաւ, արխ-
ին յըլի, իրեն հմար թագա միարաններ
գտնի ու իրեն յուզածի պէս սարգէ յամեն
բան: Քոյրիկ ջան, գուղթս քեզի զրկիմ էջ-
միածին դուն գահա մօտիկ իս, հմը շիտակն
որ ըսիմ վախենամ կը, դուն օղլուշաղ իս,
սիրուն աքսիգնագակ իս, վարդանկետների
մէչը յընկար, վախենամ խայտոտակ յըլիս,
պատիւդ կորցնիս: Դուն ատ ազար վար-
գապետներուն միջէն սաղ սալամաթ սպու-
սով չիս կունայ դուն գայ, ատոնց հախից
գենայ ես գուզամ կը: Դուն տեղը ծանոթ
նստի, ես կերթամ ու յուզածիս պէս յըստ-
կիմ կը: Դէ մնաս բարով, քոյրիկ ջան,
Քուրթէջը, Կարմրուկը, Տիֆը, Եանիգարան,
Խէրբանը, Գրողը, Պարալիջը, Բեմանիզմը,
Ժանաթաղը ցանոյ մկները... քիթուն ցաւ
ու չոտերը քեզի սիրով կարտով բարև կե-
նին կը: Ես ալ թշերդ պագնիմ կը, ասոր
բարգան բարև զրկիմ կը:

Քու ազիզ աղբար ժանկախտ Օղեսայից:

Գազէթածի Աղայ. չիմ գիտիր ինչպէս է

էզիր. անասուած ժանգախտի բարդագիրը
ըկեր մեր դուն էին ցկին: Գրկեցի ինչ
ցի, զրկեցի հրամանքիդ ջոյն: Ինչ որ ցուր
դաս, հմը չաւ չէնիս, թէ չէ ատ քուր ու
աղբար գուշմար գլին մեզի ու ինչ ըսիս
կենի կը:

Հրամանոց ամակտար
Ղալայի Մարգար



ՆԱՄԱԿ ԲԱՐԻԻՑ

«Խալխալա» տանող կազէթուն:

Հէնց որ բարիկենթանը կալխա՛ սէրտըս
հայանում թա ջաքի, ախըր հունց անէմ
ախճիքէքս եկալըն հասալ մծացալ մին
գէզան սորող տեղ կալէչ. լաւ հայի սու՛մ-
նարանում պրծալըն, պաս պահող, խոնար,
ստրնատես, ամմա իրանէրան փող չօնին,
զբա համար էլ մօտ չընթակում խեղ բա-
լցըս: Ասըմըն թա մարդ յինչքան մեծ-լաւ
սում սասնա, էնքան էլ իբան ազկին, հա-
ւատին պինդ կնի. ամմա մարթ ուրան շհա-
բան, ազկան կնկզ կօզի, ուրան ժամում
կըփստկի: Մճէգ աշխարքըս պտտո-
վալա, մեն հայ ջահիլ ջնուլը որ քնամըն
Ռուսեթա թա օթալլի շհարները սու՛մի,
մին էլ տեսնըս հայի օրէնքը, հաւատը
զբաղ տիրած օղումըն նէմէցի, ջնուգու ես
հէնց խախօլի մաթուշոց:

Ես իմ կարճ-կնգա խէլքաւ ստիմ դա-
գըմ թա սրանց լօխին մանան միք տէր-
տէրներն սարաբները շատ կայ, ամմա կի-
րըմըն, բախորցըս անիցկի տակ քցում:

Հէնց օրիշ շհարների անունը տանք ոչ,
եօր ծնէք Բոքուն.—աջանըս քեզ մատաղ,
տասնը իրէք տէրտէր կա հալա էրկու էլ
վրդաբէզ, լօխ էլ նհէնց փողըն եօր ծնում
տարէն, վէր գալի նշանիկին դուրդան շատ,
արածները հինչ ա. տրանցանը շատին աշ-
խարհական իլլած վախտընում ճնաչում.
վար, փորընէրները մէքան կպած լըբաս-
տրակի նման. լաւ լաւ պանէրըն ասում,
թա տէր տէնսալուց ստի կանէնք, նի կա-
նէնք—հէնց որ փարաջան կէնըմըն լօխ
խօսումունը ծալումըն գրաղ տընում: Մի-
նը հէնց մեր տան տէրը սու՛մը առայա
Խալխախանի շիլումը, եսօ քնացալա նէ-
մէցնէրի թաքաւերին շհարումն բար կալը՝
պօլկա մագուրկա սլէրալ, եսօ վըրժարէս
ա ըլալ, նրանա հար Բաքւա նօթի հօտը
քթալընա ընգալ, եկալա դուլուղի. դուլուղ
իլալ չի, տէր ա տէնայ, նօրընձա վախտը
լաւ էր, հօքի ունէմ Ասու տալի, դուզընըմ
ասում, հէնց որ փօրը կը փոնաւ, պօրտը
տուս պրծաւ, էլ ճընաչում չի, զօնախլըղըմ
պապրօսը պէրանին, դումարի թոխտը ձէ-
ոընքն սարմա թա «հայը վէր օրիշ ազկից
օզի ախճիկ. քէթը պու՛նուր զաշանդ խօ-
խէք սուս կըկան». մին ասօզ չինում թա՛
այ ազէր էղքան խէլօք մարտը, բա դու
գիւղում չըս որ բախին մարը հինչ մասաքի

ինի խօսան էլ նրան կըքնա—էլ խի ա ըէ-
րում բախօրց հայի ժամը թա սէրտը քնա-
մա քու եա Տէր-Սոխակեանի ժամ բաղա-
րանք անէլան մին էլ ձեզ դրիր կաղնած
կըռըղոտ եա չօփուռ տէրացուի սասէրան
հասրթա: Եղածէի խաթրան քըթավէրին
կօթան կըպաչան—չէ մալաւ կայ, մին քա-
նի տարան ետնը տհէնց ձօրից ամալ եկա-
ծը քիչ թօղելու որ Զատկան եա Սօրէթ-
մեծին քնաս տօնը եա մէնալը օրթնեա
իրէքանոցը համուռըտ ճխտի:

Ա. քու ծօխըտ Աստօծ կըտրի վէչ—հէնց
քու ծօխումըդ մին հարուր ջահիլ տըղա
կինի փսակելի, էլ հինչ ես օղըմ: Էն թա-
ւեր ծխականներ ծնիս, որ շափտեկան օխ-
տը չին իրենները երըն անում, փլըստրատի
չաքմանան, հալաւը կէնում՝ ընգնում շհարի
քուչէքը—ստուրա-նուրա հոտ քաշէլաւ քավ-
թառում:

Ախըր խէ չըս ժամում խօսում, եա քնամ
ուրանց անէրումն քարոզում, թա այ տը-
ղէք, փսակէցէք, ճանապարի եկէք, ազգի
անունը բիարուռ անիլ միք, ձեր քուրցը
դիրեաթը պահէցէք. ասիք թա ուսը, փը-
ռանգը, նէմէցը մեր հայի ախճիկը օղում
չըն, թօրքըն էլ դօրթ ա սէրտըները քնա-
մա, շատ էլ շատ շտահ ծնէն, ամմա ամալ
չիկալ: Մէր եխոտ լօթէրը մէր թեղտումը
պէտմա լւանանք:

Ազէր ախճիկօրցնէ ասի եա քարոզի թա
կլասը պըծալըս նստի տանը; քու մօր քօ-
մագ արա մին-մին հէնց եղածու եա կլօակ
իփելը սըվէրի, էլ եր միք կէնալ թուրուն
թուրուն Պատերօրգ քնամ թա հինչ ա

Փ Ե Լ Ի Է Տ Օ Ն

«ВРЕМЯ ЗОЛОТО»

կամ

ՀԱՅ ԴՐԱՄԱԿՕՄԻԲԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆԸ

Բարձր-անաստիճան «Մաթարալա»!

Թէե շատ վաղուց, ինձ խնդրելով հրա-
մայել էք զեկուցանել Ձերդ Գերագանցու-
թեան, ի միջի ալ բազմազան և բազմա-
բովանդակ նայ գործերի նաև հայոց դրա-
մատիքական ընկերութեան մասին, բայց
միայն այժմ, շատ փնտոտուց յետոյ, ինձ
յաջողեց գտնել և բարձրանալ այն եայար-
կանի շէնքը, որի ամենաբարձր քրիշ-ի
տակ ննջում է յիշեալ ընկերութիւնը:

Նախ և առաջ պէտք է զեկուցանեմ, որ
մի սոսկալի տառական սխալ է սպրդել այդ
ընկերութեան գոյական ածականի մէջ:

Այսինքն, յիշեալ ընկերութեանը ոչ թէ
պէտք է կոչել—«Հայոց Դրամատիքական
ընկերութիւն», ինչպէս մինչև այժմ սխալ-
մամբ անւանել են, այլ «Հայ Դրամակօմի-
քական ընկերութիւն», որովհետև զեռներս
չմտած, զգում ես, որ այդտեղ գոնեբում

տատմարութուն եա թա կուէք հանէլի հա-
քիմըմ տէնալու. ասի մէզանում հազար
մին հօխկա ըն կապում, բամբասում թա՝
փլանին ախճիկը քնացալ ա ոուսէթ պիվա
խմէլը, պապրօս քաշիլն ա սըվէրալ, կալուց
էլ մօրը աչքալուսանք մին դօնդդա ըէ-
րալ:

Հափ նեղացալըմ, էս պարովակիրաւ շատ
շատ աղաչըմըմ, պաղատըմ, սր հում վէր
ծէնաւ կամա, թէ կազէթ տաճող, թէ տէ-
րի, վաթթաբետի, ես սուսնարաններում տաս
տուղ վրժապետնին մասլահաթ անէն էս
մեր ազգին փչանալի սաբարներին առաջը
առնին, թա չէ եսօ շատ փեղմանութիւն
ձեռք կըկա:

Մնամ Զառի Խօնակեացի



ՅՈՐՔԸ ԵՒ ՄԵՐ ՀՍՈՐԵԿՆԵՐ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ

Ցուրտ է... խիստ ցուրտ. այժպէս ցուրտ,
որ ոչ հէրս է մտարերում, ոչ որդիս, ոչ
տատս և ոչ թոռներս:

Այս այսպէս լինելուց յետոյ, ես զեռ ևս
փնում եմ ապշած, որ ոչ ոք՝ ոչ քաղաքային
վարչութիւնից և ոչ մեր կոնսիստորիական-
ներից, ոչ բարեգործական ընկերութեան
անդամներից և ոչ ստիկանական պաշտօ-
նեաններից, անգամ հայ խմբագրիներին և
ոչ մէկը չեն մտածել այդ անօրինակ ցրտի
դէմ մարտնչելու մասին:

Կանգնող (սպասաւորելու համար) ծառայից
սկսած մինչև վերին ծառայադետը—կատա-
րեալ կոմիկներ են:

Օրինակ.
Երբ ներս էք մտնում և շորկախի (ВЪ-
шелка) մօտ կամենում էք հանել, մեծա-
պատիւ ծառան ժպտալից յայտնում է, որ
դուք կարող էք հէնց այդպէս, վերարկուով
բեռնաւորեալ և ցեխոտ կրկնակօշիկներով
բարձրանալ ընկերութեան գրասենեակը:

—«Время золото» ասում է նա.—միթէ
կարելի է ամբողջ ժամանակ այստեղ ան-
գործ կանգնել և հակել հանդերձներին:


Այն, «ժամանակը ոսկի է», լաւ նկատեց
այդ մուծիկը, մտածում էք դուք և
սկսում էք դանդաղ ու հեալով բարձրանալ
մի շարք անվերջ սանդուխքներ:

Վերջապէս հազիւ հազ հասնում էք եր-
կու ցածր դռների, որոնցից մէկի վրայ
(ինչպէս և փողոցի դռներին) գրեալ է
«Հայոց Դրամատիքական ընկերութիւն. բաց
է 2-ից—3-ը և 7-ից—8-ը»: Էլ ուրիշ ոչինչ:
Ձեր մէջ իսկոյն հարց է առաջանում,—
արդեօք կարելի՞ է մտնել առանց իմաց
տալու. բայց փոքր ինչ մտատանջելուց
յետոյ՝ վճռում էք մտնել, եսթաղրելով, երբ
ոչ մի գրաւոր նախազգուշացում չկայ այդ
մասին, ուրեմն կարելի է:

Եւ դուք մտնում էք:

Պարոններ, ով է իմացել այսպիսի անարար-
բեր վերարկումներ:

Այժմս երբ ցուրտը մինչև մեր ուղն ու
ծուծը մտել է, երբ Երբեք... միկանք մի
չափ զգալի է նա, այժմս է հարկաւոր տա-
քութիւնը, լաւ ու պայծառ օրերը, թէ չէ
ամառը շոգ է ու շոգ և ինքը՝ բնութիւնը
օգնութեան է գալի մեզ—արդ՝ այս ամենը
ի նկատի առնելով, որ վերև յիշեալ հիմ-
նարկութիւնները ժողովրդին բարձի թողի
են արել և անասելի ցրտերի դէմ ոչ մի
միջոց ձեռք չեն առել, ուստի թւում է մեզ,
որ լաւ կըլինի, եթէ լնքներս մտած՝ նք և
միջոցաւոր տաքացնենք հրապարակներում
գնելով մեծ մեծ աների: չափ վարաւաններ,
որոնցով կարելի է ցրտութիւնը մեղմացնել:
Մեզ թւում է, որ այդ ամենալաւ միջոցը
կըլինի, յիշեալ հաստատութիւններին մեր
զգոհութիւնը յայտնելու:



ԵՐԵՎԱՆԻ ՀԷՔՐԵԹ

Գեղեցիկ Շեխերազադան իր տիրոջը ա-
մենայն բաւականութիւն տալուց յետոյ՝
նստեց շքեղ պարսկական գորգի վրայ (որը
գնեալ էր պատահական ապրանքների խա-
նութում) և ձեռքերը դէպի երկինք բարձ-
րացնելով՝ ասաց.

—Իմ ամենակարող տէր, այն պատմու-
թիւնը, որը ես կամենում եմ պատմել քեզ
այժմ՝ այնքան անսովոր բան է, որ եթէ
նա սպէք «Հորիզոն» թերթում, բոլորը

Բայց սարսափելի է դառնում ձեր դրու-
թիւնը, երբ իսկոյն ձեզ վրայ են յարձակ-
ւում մի քանի վոյգ գարմացած, ապշած
կատաղած և այլ բարկացած—բաց—կպած
աչքեր, որոնց բոլորի արտայայտութիւնը
կարծես աղաղակում է միարեան:

«... Այդ ինչպէս համարձակեցիր խան-
գարել մեզ և...»

Եւ այդ բանում նրանք կատարեալ իրա-
ւունք ունեն:

Որովհետև երբ լաւ դիտում ես շուրջդ,
հազիւ հազ նկատում ես դիմացի հեռու
պատի վրայ մի փոքրիկ թղթի կտոր, որի
վրայ ուսեւրէն մի ձեռագիր ծանուցա-
նում է:

—«Время золото»:

—Ա՜... այ թէ ինչու ցածի ծառան էլ
ասաց՝ որ «ժամանակը ոսկի է»:

Էլ ինչ կասկած. իսկոյն շտապում ես գը-
լուեկ կորցրածի պէս յանձնել ինդիրդ ու
ասել ասելիքդ և շուտ փախել այդ ոսկի ժա-
մանակը ճշգրիտ գնահատողներից, որպէսզի
այնտեղ ժողովածները կրկին խաղաղ շա-
րունակեն իրենց «արդիւնաւէտ» գործու-
նէութեանը կամ քաղցր ու սրտազին դրոյց-
ները, ընկեր անբիս անմօրուսների հետ:

«ժամանակը ոսկի է»:

Այժմ մի քանի խօսք յիշեալ ընկերու-
թեան կանոնադրութիւնից, որը անձամբ



անկասկած կատելին, որ այդ ստույգին է: Մի կիսաբարեպաշտ մուլա (բարեպաշտ մուլաներ, ինչպէս քեզ յայտնի է, իմ հրամայող տէր—չնէ լինում, ինչպէս նաև հայերի մէջ այժմ չկան բարեպաշտ վարդապետներ...) այո, այդ մուլան ունենում է մի երեխայ: Ողորմած Աստուծոյ, ունասարակ ողորմած արար էր վերաբերում մուլաներին, բայց այս անգամ, ինչպէս երևում էր՝ մի ճակատագրական սխալ էր սպրդել: Մուլայի որդին ծնւեց այնպէս, ինչպէս որդի կարող է ծնւել մի որևէ գեաւուրի համար: —Փոքրիկ, ճաղատ մինչև գարշապարիքի վերջին ծայրը, մեծագլուխ, ծնւելուն պէս նրա առաջին զործը եղաւ հայհոյանքը ինչպէս «Հորիզոնի» և «Մշակի» ժուրնալիստները, որ մանկաբարձուհուն զորս գու պատւիրեցիր, քու սիրած՝ մի լաւ հայհոյեց և չուզեց լողանալ, առարկելով, որ ինքը ծընընդեամբ սե է, իսկ համոզմունքով ազատական...:

Երբ երեխան մեծացաւ, նրան ստանց բացատրութեան ոչ որ չսիրեց. միայն տեղական զափթին (զինոր) համակրեց նրան և մինչև անգամ յայտնեց, որ նա կարող է մեծ շահ ունենալ, եթէ մտնի զափթիների շրջանը ի հարկէ:

Երեխան մեծացաւ և նրան վերջի վերջոյ տւին գիմնազիա: Յայտնի բան է, իմաստուն տէր, որ մեր Արաբիայում գիմնազիա չկայ. սակայն այնպէս ձևականութեան համար, ուսման մասին սովորաբար չեն մտածում: Բայց արի տես որ երեխան այդպիսի գիմնազիայում դարձեալ հանգիստ չմնաց:

Քաղցի գլխաւոր, բայց բերանացի մատենանից:

§ 1. Եթէ մի որևէ հայ հեղինակ զժբախտութիւն ունեցաւ պիւս գրելու, այդ պիւսին լաւ կանի, որ այդ զժբախտութիւնը մօտը պահի մինչև իր մահը:

Յամենայն դէպս մենք ոչ որք խորհուրդ չենք տայ այդպիսի դատարկաբանութեամբ և ժամալուծառութեամբ զրազելու:

«Ժամանակը ոսկի է»:

§ 2. Հայ Դրամատիքական ընկերութիւնը ոչ մի վտանգութիւն և ակնկալութիւն չունենալով ազգային հեղինակներից, միանգամայն ազատ է համարում իրեն նոյն իսկ մօտաւորապէս անջրի անցնելուց այն փոքրաթիւ գրւածքները, որոնց հեղինակները կրկին և կրկին անպատկառութիւն կուենան իրենց ներկայացնելու:

Ընկերութիւնը այդ բանից աւելի անհրաժեշտ գործեր ունի կատարելու: *)

«Ժամանակը ոսկի է»:

§ 3. Ընկերութեան հասակով ամենապատուաւոր անգամ Լևոն Բարախանին յանձնարարւած է դարարազցեղէն և ըստ իր տեսակի ոգևորութեան ենթարկել այն ծանօթ հեղինակներին, որոնք միամտութիւն

—նա սկսեց ընկերների մասին մասնութիւններ անել, արաբական և այլ սե մարդկանցից ինչ որ միութիւններ կազմել. իսկ գիմնազիայի տեսչի գաբշապարը որը չորս անգամ համբուրում էր. զբանով կամենալով ցոյց տալ իր համակրութիւնը գիմնազիական կարգերին:

Իսկ նա մեծ ընդմիջումներին վաղում մանում էր բեկրեացիների գահիճը և բարձրաձայն երգում.

—Աշխարհում ոչինչ ինձ հարկաւոր չէ, բացի գիրեկտորի գաբշապարից:

Ընկերները նոյնպէս նրան չէին սիրում, իսկ վարչութիւնը նրան շատ էր համակրում և նոյնպէս մեծ կարիքն էր խոստանում:

—Չանձրալի է այդ, Շեխերազադա, ասաց փաղիշահը և նրա աչքերը սկսեցին ծանրանալ:

—Համբերիր, ամենակարող տէր, ասաց Շեխերազադան, —հիմա ծիծաղելի կըլինի: — Եւ այդ երեխան, որի վրայ բոլորը ծիծաղում էին և բնաւ չէին սիրում՝ յանկարծ ընտրում են...

—Սպասիր, սպասիր, Շեխերազադա, — կանգնացրեց սուլթանը պատմող գեղեցկուհուն: —Այդ դու Պուրիշկիշի մասին ես պատմում: Վաղուկա Պուրիշկիշի մասին:

Շեխերազադան լուռ շարժեց գլուխը:

—Հ'ը, ես այդպէս էլ գիտէի, — անբաւական եղանակով ասաց սուլթանը: —Այդ շատ ձանձրալի և անհաճոյ պատմութիւն է:

Եւ այս ասելով՝ սուլթանը երեսը գարձրեց դէպի պատը ու քթի ծակերի բոլոր

կուենան պիւս ներկայացնելու յիշեալ ընկերութեան:

Իբրև մի նմուշ, հարազատութեամբ գրում ենք յիշեալ պարոնի մի քանի խրատուական խօսքերը, ուղղած մի հորընծայ հայ հեղինակի:

—Ազա, բա մարդ էլ էդքան պիւսայ կըզրի, բա դու էլ ուրիշ գործ չունես... Մի մտիկ արա է...

«Ժամանակը ոսկի է» սիր:

§ 4. Ընկերութիւնը ոչ մի գիտցալիքնա և որոշեալ ժամանակ չի ընդունում, որից յետոյ պարտաւոր զգայ ձիշտ պատասխանելու իրեն հետ գործ ունեցողներին:

Առհասարակ ընկերութեան բոլոր գործերը տարւում են ամենավերջին ամենախիստ մեթոդով:

«Ժամանակը ոսկի է»:

§ 5. Միայն աչքի ընկնող պիւսները յանձնում են փոսեցնելու մեր միակ հանձարեղ, վարչութեան բոլոր գործերի տէր ու տնօրէն, նրա և գերաստանական խմբի մատուր բովանդակութիւնը ներկայացնող պ. Արմէնեանին, որից էլ կարող է տեղեկութիւն ստանալ իր գրւածքի մասին ամեն մի հեղինակ, անորոշ ժամանակում:

Պ. Արմենեանը ձեզ կըպատասխանի ամեն տեղ, նոյն իսկ փողոցում ոտքի վրայ կանգնած:

ուժով սկսեց խումբացնել:

Շեխերազադան առաջին անգամ մնաց իր տիրոջ քթի հետ:

Մ Ա Ն Բ Ո Ւ Ն Ք

Վ.Ա.Ռ.ՈՂ, Ե. Է.Ա.Գ.ՉՈՂ, ՍԵՐ

Ինչքն է, որ երկու այբուղ փայտեր եթէ իրար մօտեցնում ենք—աւելի են վառուում, իսկ եթէ հեռացնում ենք իրարից՝ հանգչում են:

Այն ինչ երկու սիրահար զոյգեր քանի հեռու են լինում իրարից՝ սիրուց աւելի են այբուղ, հէնց որ ամուսնանում են, մօտեցնում, սէրը հանգչում է և տուր աս գմբոցն սկսում:

Մղրեմ բացատրէք:

Ն.Ա.Մ.Ա.ԿԸ

Մի մարդ երեխային մի փակ նամակ և մարկայի համար 7 կոպ. փող է տալիս, որ տանի փոստի արկքը. ձգի: Երեխան վերցնելով այդ տանում է թէ նամակը և թէ 7 կոպէկը ձգում պօստի արկը:

Փարեմուզ

- Օրիորդ, ինչո՞ւ էք դուք ինձ ատում:
- Ատում եմ... որովհետեւ չեմ սիրում:
- Ես կըսիրեմ, դուք ասեցէք... տեսնե՞ք վերջը ո՞վ կըյաղթի:

Այդ գիրքում դուք պարտաւոր էք նախ շատ համառօտ, մի քանի խօսքով ծանօթացնել պ. դատաւորին ձեր պիւսի հետ և իսկոյն էլ լսել նրա հեղինակաւոր և անաչաւ կարծիքը:


Նա ինքը պիւս կարդալու ժամանակ չունի, որովհետեւ «Ժամանակը ոսկի է»:

Եւ վերջապէս՝ ինչ պարտական է մի գերաստան, չնչին վարձատրութեամբ մի այդպիսի ծանր պատասխանատուութեան ենթարկելու, առանց այդ էլ իր վտիտ անձն ու ընդունակութիւնները:

Վերջապէս, Տէր «Մաթաբալա», մնում է ինձ այս էլ ասել և վերջացնել դակաղը: Դրամատիքական ընկերութեան կից ժիւրէն մինչև այժմ ոչ մի ինքնուրոյն պիւս չի կարգացել, որովհետեւ ընկերութեան երեք անգամը անձնական գործով հեռացել կամ հրաժարական են տւել, իսկ մնացածները հանգամանքից օգտւելով հանգիստ զբաղւում են իրենց կեանքի անհրաժեշտ չարքաներով:

«Ժամանակը ոսկի է»:

Մարդ.



*) Նա գրաւած է գալ տարայ բեպեռուարի համար կատիք հեղինակների թարգմանութեամբ:

Տգեղները չեն սիրում հայելին: Աւելի շատով գեղեցիկը կը հաշտուի տղի հետ, քան թէ տղիը գեղեցիկ:

Բանուորը.—Աղան, ես ամբողջ օրը աշխատում եմ և այդ է պատճառը, որ ես քրքրախինքի մէջ լողում եմ... իսկ ձեզ ի՞նչ է պատահել, որ դուք քրքանել էք:

Աղա.—Ես ճէնց նոր ճաշից վեր կացայ... դեռ չեմ հանգստացել...

Ա. Աղաչեան

ՇԱՏ ՊԱՐԶ

—Ի՞նչ էք անում, որ այդպէս մաշում էք:

—Ե՛ս,— ոչ ի՛նչ:

ՊԱՆԴՈՒԿՈՒՄ

—Քանի՞ բաժակ օղի էք խմում օրեկան: —Սովորաբար երեքից մինչև չորս, երբեմն՝ հինգ, բայց մեծ մասամբ՝ ութ:

ՎԱՂՈՐՕՒԹ

—Ինչի՞ մասին ես այդքան մտածում: —Ես չգիտեմ թէ ի՛նչ անուն տամ իմ Նիցցայի ամառանոցիս:

—Այնտեղ դու ամառանոց ունի՞ս: Այդ ես չգիտեի:

—Ո՛չ, տակաւին չունիմ, բայց մտադիր եմ խաղարկութեան մի ամսակ ձեռք բերել և տարած գումարով մի ամառանոց գնել Նիցցայում:

ՄԻԱԿ ԲԱՆԸ

—Ինչո՞ւ պարկեշտութիւնը կնոջ լաւագոյն առաքինութիւնն է համարում:

—Որովհետեւ դա է միակ կանացի զարդը, որին անկարելի է գրաւ դնել:

Եւեթեա

Ք Ա Ր Ո Ջ Ի Չ Ը

(Երակամ գէպ)

Տիրացու քանանայի քարոզը հանգուցեալի վրայ

Սիրելի ժեղելուրթ... և դուք շնթանած քաւթաններ, լաւ լսեցէք... քարոզ ըմ տղական, ամա դէ քարոզըս վտակալին, առական և կիրական... Մարքիս ջան, բէգ լաւ լսէ... քթէդ պողմութիւնն եմ ընկալան... Ջումշուդ բէգ, տիւ էլ լաւ լսէ, քու բէթգ էլ ա զէս...

(Դառնալով իւր մօտ կանգնած Երեւոյսին):

Ա՛ լակնու... ձէնդ կարէ... (դառնալով իրենից մօտիկ կանգնած մի ծերունու): Ա՛ քաւթառ, ասի լակուտին ձէնը կարէ է:


Օրինակ վերցնենք, Հնգստանս մին զէս...

ճողպուր... (ցոյց տալով երիտայի գլուխը) էս լակուտին կլխին մշունք... հունց վար վէրթնը նի ա մանում ճողպուրին մէջը օտոնում ան... օտոնում... տողում... ինդի էլ մեր սէրտը...

Էդ վէրթնը հլօր-մլօր ընկաւ նի ա մըտնում մեր սէրտը ու օտոնում ան... օտոնում, տողում ան, ու էլ տեղ չի ինում վար տիւս կեան... Էդ վէրթնը մեր մեղկերն ան... Սիրելի ժեղելուրթ!

Տիւք գիւզում ըք թմ Ալիքսանը մեռած ան... վէջ... նրա հոքին քինում ան... վաթսունէրկու վերստ քինում ան... քինում ան... և համում ան էն դեմնը, վէր Աբրահանն ա նստած... և ասում ան, Աբրահանն, Աբրահանն... Աբրահանն էլ ասում ա, Ալիքսան, Ալիքսան, արի մարի իմ վիտների տակ... արի: Ուրեմն սիրելի ժեղելուրթ! մեղքը չանէնք վէր էդ վէրթնը... այսինքն չար-ստանան տիւս կեան մեր սրտից ու կորչի քինան... Ուրեմն եր կալիք տարիք մեռալը և հողին պահ տեիք...

Խորէն-ժանգը-Ռիսլ



ՆԱԼՈԳ ԽԱԼԱՍՏԱՅՆԵՐԵՄԷՆ

—Հը՛, պարուն Ստեփան, վունց է, իս ու դուն հիմի էլ չինք պսակի:

—Ի՞նչի համա իս ասում, ի՛նչ է էլի վուր:

—Վա՛... թագա խաբար չիս իմացի՞, տօ, ախր խալաստոյներեմէն նալուգ պտին առնի:

—Գիթաղա՞?! Ի՛նչ իս ասում, վան, տեհնում իք, ինչ ին փիքը արի՞... էս բանը թային (տօլլալինի բանը կուլի, ու ամա թէ փուղ կու մտնի խաղինէն հան...)

—Ի՛նչ մէ էն ասա, փոսկուում իս, կնիկ իս ուզում, թէ՞ չէ:

—Ախպէր, ինչ ասիմ, լաւ օյին ին էկի խալաստոյներու գլխին, մինք կնգրբանց խանջ ու բորջիցը փախչում ինք ու դրա համա էլ չինք պսակում, նրանք կի նալուգ ին մողմում: Մազրամ էլի վուչինչ չի ըլի, շատը չի պսակի, այ ընչի: Էդ նալուգը շատ ըլի տարէնը մէ երկու ան իրիք թուման, հիմի կնգայ նալուգը հաշէ ու տի՛ ինչքան է: Ախպէր, մօզէն ամենաքիչը մէ

2—4 ջէր փոխում է տարէնը, ամա մէղէրիէն հինգ թուման վուրը դալիքը էդ քանութուման, ամեն մէ շապէն 2—3 թուման, էդ էլ քիզ մօտ տասը թուման, էն մէղէրբանիքն էլ չիմ հաշում, վուր մարթու քիսէն դարգիւում է: Դէ՛, հիմա ասա ինձ, Եագոր ջան, էն լաւ չի՞. վուր տարէնը մէ 2—3 թուման նալուգ տամ ու էտղապար խարջեմէն գլուխս տղատիմ... Գոգ. Մար.



Նւէր օր. Ե-ից

Ջ Ա Ր Թ Ի Ր !

Autre chanson.

(Ազատ փոխադրութիւն Վիկտօր Հիլպօից)

Չարթիր, իմ սիրտ! Տօղը անա Արցունք թափեց ծաղկի վրայ.— Երբ արթնացաւ թերթը վարդի, Մի՞թէ, իմ սիրտ, դու չ'ես գարթի.

Այգ է դրսում,— Եւ սիրելիս՝ Գողում, մրսում, Ինձ է գալիս:

Քո դաներին ճայն է լուում.— «Անա բեգ օր!—շողը ասում», «Անա բեգ երգ!—նարը երգում», «Անա բեգ խինդ!—կուրծքս է կրկնում:

Այգ է դրսում.— Եւ սիրելիս՝ Գողում, մրսում, Ինձ է գալիս:

Սիրելուս մ'էջ երկու աշխարհ— Երկիր, երկինքն եմ միացրել.— Մերթ հրեշտակ աստաճացրել, Մերթ սիրել եմ կի՛ն խանդալտ:

Այգ է դրսում.— Եւ սիրելիս՝ Գողում, մրսում, Ինձ է գալիս:

Երկինքն օրնեց իր էակին, Աչքեր տեց ժով դիակին,— Որ սիրելուս նմայն զգամ, Եւ սիրո՛ւ,—հանեմ որ նրան տամ:

Վեր կաց, իմ սիրտ, Արեւ քացեց,— Վե՛ր—սիրելիդ Բեզ սպասեց....

Աբխիմ





—Պարոններ, դրամիւնը այնքան խիտ ու ծանրակշիռ է, որ մեզ յամար անգամ սխեմ է, որ երբ մարդիկ, երկոտանի մարդիցները մեր դերերն են կատարում, ահա տեսէք այս ճնշին մ'կենքի պատճառով մենք կարող ենք մարդկութեամբ մեծ վնասներ հասցնել. սասցէք խնդրեմ, կատուներս ի՞նչ անենք, հիմի է՛լ լոնք. հիմի էլ լոն՛կը ե՛րբ այս փուչ կենդանիները բոլոր ծակերը մտել են եւ դուրս չեն գալի հրապարակներ, որ մենք սրանց հոգիները հանենք.

—Ոչ, չպէտք է լոնք, բոլորին էլ կենդանի կենդանի պիտ կուլ տանք ու աչքը հանենք:

Թ Ի Ֆ Լ Ի Ս Ի Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Թ Ա Տ Ր Ո Ն Ո Ւ Մ



OSKAR
SCHANCK

ԷՅԵՆԵՆԱՆԼԻՐ ԳԱՐՈՒՄ Է ՄԱԴԻԱՍՈՒՐԻՏԻ ՆԵՏ.

—Պար բոնիր, սողիկ ջան, պար բոնիր. թող որ հասարակութիւնը մերկ մարմինը տեսնի... նա-չակը գարդացնի.

—Ձը կարծես թէ՛ ես քո փողի, ստտիճանի եւ կամ անամդ համար ամուսնացայ.

—Հարա ի՞նչի համար.

—Բո սիրունիկ դէմքիդ համար. դու յիշեցնում ես իմ ծերունի պապիկիս. նա նոյնպէս քո հասակին էր եւ զարե.

Լեւի ՏՈՂՍՏՅՅԻ ՄՏՔԵՐԻՅ

(Կեանքի եւ մարդկանց մասին)

Մարդուն ոչ մի մարդկային բան չափակար չէ:

Եթէ մարդ գործում է ոչ է ցոյց այլոց, այլ առաջնորդելով ի կատար ածելու ցանկութեամբ, ապա ուրեմն անխուսափելի կերպով նա կատարում է մի որոշ էութեամբ յաջորդական գործ:

Կարելի է փրկել այն մարդուն, որ չի ուզում փչանալ:

Մեզանում մարդիկ պատկուտ են, ամուսնութեան մէջ բացի սեռական յարաբերութիւնից այլ բան ի նկատ չառնելով և դուրս է գալիս կամ խաբէութիւն և կամ թէ բռնութիւն:

Մարդ ոչնչի չի կարող տիրանալ, քանի դեռ վախենում է մահից: Իսկ ով չի վախենում նրանից՝ ամեն ինչ նրան է պատկանում:

Ինքն իրեն այսպէս պէտք է ասել՝ ես ո՞չինչ չեմ իմանում և չեմ էլ ուզում աւելի, քան թէ իմանամ միայն կեանքի իսկական իմաստը, այն կեանքի, ուր ես պիտ ապրեմ:

Մարդկային կեանքը մշտական խնդիրն է ամեն մի մտաւոր գործունէութեան:

Թշուառ, խղճուկ արարած է մարդս իր դրական վճիռների պահանջկոտութեամբ՝ նետուած այս յաւիտենապէս շարժուն, բարւոյ և չարի, փաստերի, համակերպութիւնների և հակադրութիւնների ովկեանոսը:

Մարդս երբէք այնչափ ետական չի լինում, որչափ հոգեկան սքանչացման բուպէին:

Ամենքը կարող են նկատել, որ անբարոյ յակն վարք ունեցող մարդիկ բոլորից առաւել շատ են հակած դէպի մոլոր բաները:

Չկան այնպիսի պայմաններ, որոնց չընտելանայ մարդ, մանաւանդ, երբ նա տեսնում է, որ իր շրջապատում ամենքն են այնպէս ապրում:

Ինչքան լաւ կըլինէր իմանալ, թէ ո՞ր որոնել այս կեանքի փրկութիւնը և ինչքն սպասել նրանից յետոյ, անդրգերեզմանում:

Կեանքը՝ բանականութեան օրէնքին հըպատակ կենդանական անձի գործունէութիւնն է:

Այս մեր արար աշխարհը—մի բորբոսնած

ծաղիկ է, որ աճել է պատիկ մոլորակի վըրայ: Իսկ մենք կարծում ենք, թէ մեզ մօտ կարող են լինել որ և իցէ մեծամեծ մտքեր, գործեր: Այդ բոլորն աւազի հատիկներ են:

Մարդկանց երջանկութիւնը կեանքի մէջ է, իսկ կեանքը գործելու մէջ:

Ո՞ւր են մեզանում այն մարդիկ, որոնք համոզւած են, որ իւրաքանչիւր մի աշխատաւոր կեանք աւելի գերաբասելի է, քան պարագ-սարագ մնալը,—այդպէս համոզւած են և այդ համոզմունքի համեմատ էլ գնահատում և յարգում են մարդկանց:

Յովակ Սեփակեան



ՆԿԱՏՈՒՄՆԵՐ

—Այո, Պետրոս. ես համաձայն եմ քեզ հետ, իսկպէս որ այդպէս է. քանի մարդու գլխի մազերը սև են՝ նա լինում է ազատամիտ, առաջադիմական և մաքուր հոգու տէր, հէնց որ սպիտակում են մարդու մազերը, նա դառնում է խաւարամիտ, պահպանողական և յետադէմ. այ օրինակ քեզ Հովի Համբարձումը... Լէօն, Յով. Թումանեանը և որ մէկը ասեմ կամ որ մէկի անունը տամ:

—Չարմանալի է, հաւատացնում եմ մեր կանանց յետադիմութիւնը: Մի քիչ առաջ նրանք մտածում էին իրանց շրջադիտաները դէն շարտել և տղամարդու նման բրիւկ հագնել ի նշան առաջադիմութեան, յանկարծ նրանք այսօր՝ այդ շրջադիտաները մատում անց են կացրել մի այնպիսի օղակ, որ քայլերիս հազիւ ոտ-ոտում են ու քիչ է մնում, որ վայր ընկնեն...
—Էդ նրանից է, որ նրանք երկու ոտքն են բրիւկի մի տասը դրել. վաղը միւս օրը բրիւկի տօտերը դատ-զատ կըլինեն և տղամարդու զատ-զատ տոտերով բրիւկ կըհագնեն, դրան կասեն «առաջադիմութեան» առաջին քայլ:



Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր
160263
ԻՒԱՆ ՉԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆԻ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՅ

ԱՐՏՕՆՈՐՈՒԹՅՆԵՐՈՎ

ՀԱՅԻՍՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐ

Խնդրագրերն ընդունում են մինչև յունւարի 15-ը. Բաղդադայա փողոց, № 19. Վրոնցովի արձանի դիմաց: 0—3

МАГАЗИЪ

Композиція

Тифлисъ. Пушкинскіи пассажъ № 8

ГРОМАДНАЯ ЭКОНОМІЯ

шведскаго композиціон. бѣлья.

Носителъне менѣе двухъ лѣтъ постоянный болъшой выборъ свѣжаго товара.

Воротниковъ, манишекъ и манжетъ.

по фабричнымъ цѣнамъ. Передѣлка въ любой фасонъ бесплатно

Продюются портняжныя принадлежности, какъ-то пуговицы, подкладки, мѣлъ и прочѣе.

Имѣется таоте галантерейный Отдѣлъ
00—29 М. А. КАЛТАКЯНЦЪ



Բ Ժ Ի Շ Կ

Ե. Ի. Միևստեանց

Ներքին և երեսայոց և ստամբուս-աղիքային հիւանդութիւնների պրօֆ. MATHEU-ի մասնագիտական կլինիկայից Պարիզում:


Ընդունելութիւնը առ. 9—11 ժ. երեկ. 5—7 ժ.: Ելիզաւետինսկայա, 39: 100—51

Բ Ժ Ի Շ Կ

ՓԱՆՕ ՄԱՆԴԵՆԵԱՆ

Մասնագիտութիւն՝ ՄԻՉԱՍԵՌԱԿԱՆ, ՎԵՆԵՐԱԿԱՆ և ԿԱՇՈՒ հիւանդութիւններ:

Ընդունում է հիւանդներ իր սեփական ամեն օր առաւ. 9—12 և երեկ. 6—9. Ելիզաւետեան փող. № 28. 00—54



Բ Ժ Ի Ը Կ

Արտաշես Երեսն

Վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը իր ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ, Գանովսկայա փողոց № 15.

50—40

Յանանկալով մեր բոլոր բաժանորդներին ամենայն տեսակ բարիքի հուրդ ենք տալիս բաժանորդագրել և ամենօրեայ հայերէն ամենամեծ ու օգտակար

ՍՈՒՐԶԱՆԴԱԿ

Գրական, քաղաքական, հասարակական և առևտրա-արդիւնաբերական լրագրին, որ գեկտեմբերի 1-ից հրատարակուած է ամեն օր, այն ուղղութեամբ և այն ծրագրով, որ ունեցել է սկզբնաւորութեան օրից և որը գոհունակութիւն է պատճառել ընտիր և բանիմաց հասարակութեանը:

«ՍՈՒՆԱՆԴԱԿ» տարեկան բաժնեգիրն է 10 ռ., կէս տարւանը 6 ռ. Սակայն «ԽԱԹԱԲԱԼԱ»-ի բաժանորդների համար պատրաստ ենք զիջել և սույլ հետևեալ գներով.

»ՍՈՒՐԶԱՆԴԱԿ« եւ »ԽԱԹԱԲԱԼԱ« միասին

Տարեկան	12 ռ. ©	Երեք ամիսը	4 ռ. — 4.
Կէս տարին	7 ռ. ©	Ամիսը	1 ռ. 50 Կ.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакция „Сурандакъ“,
Հեռագրով՝ Тифлисъ, „Сурандакъ“

ԲԵՐԵԱՆ ԲԱՆԳՈՒՄ
 ԹԱՏՐՈՆ Ե. Բ. ԶԱՆՓՈՒԼԱԳԵԱՆԻ
 Երևանի հախիկին ակումբի շինութիւնը՝ հիմնական վերաշինութեամբ յարմարեցրած է յատկապէս թատրոնի համար: Առանձին պատկերով բերուած են բոլորովին նոր, շքեղ դեկորացիայի կամ բուսաֆոր, բեկեղիկ և ամեն յարմարութիւնները:

Պ. պ. արտիստները և սիրողները կարող են դիմել՝ ВЪ гор. Эривань, Театръ Джанполадова, կամ՝ въ гор. Тифлисъ, Пушкинская 3, конт. „Энергия“.
 10—10

ВСѢМЪ—ВСЕГДА—ВЕСЬМА НУЖНО

„ГУРЪ-ГЕРЪ“

IV. Ч. I.

Способъ быстрого, легкаго и точнаго исчисления процентныхъ и другихъ денежн-ыхъ интересовъ отъ минимума до максимума.

Вычетъ 1/10, 5/10, 5% государственнаго налога. Дисконтъ. Процентное число. Стоимость 1-го, 2-хъ, 3-хъ и 4-хъ полныхъ саж. дровъ въ вершкахъ. Цѣна пуда въ фунтахъ. Годовой приходъ въ дняхъ. Цѣна и количество товаровъ.

СКЛАДЪ У АВТОРА

Адресъ: Кавказъ, Александрополь, Петру Д. Гайказуни.

ЦѢНА ОДИНЪ РУВЛЬ. 10—9

Изобрѣтенеіе того-же автора:

„ГУРЪ-ГЕРЪ“ I. Указатель процентовъ цѣна	80 коп.
„ГУРЪ-ГЕРЪ“ II. Исчислитель процентовъ „	50 „
„ГУРЪ-ГЕРЪ“ III. Табличка	5 „

ԲՈՂՈՐ ՏԵՍԱԿ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԳՆՈՒՄ ԵՆՔ ԱՆՄԻՋԱՊԵՍ

ԱՐՏԱՍԸ ՀՄԱՆԵԱՆ ԵՒ ԹՈՒՄԱԿԱՆ ԳՈՐԹԱՐԱՆՆԵՐԻՑ

„ՕՒՆ ՄԱՐՇԷ“

Գ ա շ ա ն տ ե թ յ ն ի ա պ ռ ա ն ք ն ե թ ի մ ա գ ա գ ի ն

Գոյովիճակի պրոսպեկտ, Արեւելի բասթոնի դիմաց, տուն Ա.Ն.Ա.ՆԵԱՆԻ

Որպէսզի վերջին նորութիւնների սիրահար պատուելի հասարակութիւնը

Հ Ա Մ Ո Ջ Ի Ի

որ մեր մագաղինում ապրանքները անհամեմատ ԱՐԺԱՆ են և աւելի ԴԻՄԱՑԿՈՒՆ գնահատելի

*** քան մի ուրիշ տեղ ***

ՆՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԱՆՉԱՄԲ ՀԱՃԷՔ ԱՅՑԵԼԵԼ ԵՒ ՍԵՓԱԿԱՆ ԱԶԲՈՎ ՏԵՍՆԵԼ

25—20 ԱՊՐԱՆՔԸ ԵՐԺԱՆ, ԳՆԵՐԸ ՎԵՐՋՆԵԿԱՆ (Ե.Տ.Չ.)



Յովհաննէս Թումանեան.—Էդ իմ դէտարիը թող խօսի իմ կողմից դատին:
 Համբ. Առաքելեան.—Էս քու դէտարիը չեմ դիմում, սրանից բան չեմ հասկանում, ինքզ զուրս արի մէյ-
 գան, որ տեսնոնք սև ու սպիտակը:

(Եւ ինքիբցողը տեսնում է ու լսում հայեոյանք, հայեոյանք ու միշտ հայեոյանք—հայկական սև ու սպիտակը):